13411

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՃԱՒԱ

Զոր թարգմանեաց 'ի հոլանտերէն բնագրէն

ԽԱՉԻԿ Ա. ԹՈՎՄԱՍ

Ի ՋՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՍՐԲՈՑ ՎԱՆԱՑ

1881

342
U-15

2010

342
U-15
25262-ա
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
4393-56

Թարգմանեալ օրէնք ։

ՅԵՆՍՈՒՆ ՏԵՐՈՒՆ ԵՐՔԵՑԻ

ԸՄԷՆԻՐԽԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԵՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՑ ՀՈԼԱՆԴԱՑՒՈՑ·

Ի ԽՈՐՀՐԴԵԱՆ

Առ ամենեսին, որոց պարգեւքս այս ելցեն, ողջոյն ։

Գիտասցէ ամենայն մարդ,

Զի կշռեալ նորա զնամակ աղաչանաց մատուցեալ 'ի Յ. Յարութիւնայ և յայլոց ևս ոմանց, յորոց կազմի Ատեան Ժողովրդեան Հայոց 'ի Ճաւա. որով խնդրի 'ի նմանէ հաւանել ընդ Սահմանադրութիւնս և ընդ կարգադրութիւնս Միաբանութեան նոցա սահմանելոյ յանսահման թիւս ամաց, և դնել զայն յանձնաւորութիւն ։

Ըստ զօրութեան 1. 2 և 3 պայմանաց Արքունի վճռոյն, որ 'ի 28 մարտի 1870. թիւ 2 (Խմբագիր Պետութեան Հնդկաց թիւ 64) և 20, 29, 31 և 33 պայմանաց կարգադրութեան 'ի տեսչութիւն Հնդկաց Հոլանդացւոց ։

Հաճեցաւ իմանալ

Ընդ սահմանադրութիւնս և ընդ կարգադրութիւնս Ժողովրդեան Հայոց 'ի Ճաւա, որպիսիք ընդ նամակի աղաչանաց նոցա կցորդեալք, հաւանել, և զմիաբանութիւն նոցին համարել իբրև զմարմին անձնաւոր ։

Նաեւ զի մի՛ ոք չգիտանս պատճառեսցի զայսորիկ, տացի սա 'ի խմբագիր Հնդկաց և Հոլանդացւոց, և 'ի լեզուս Հնդկաց և Ճենաց :

Հրաման է դարձեալ զի ամենայն դրանիկ Պետք և Պաշտօնեայք, Գործակալք և Ատենակալք տացեն իւրաքանչիւր ըստ կարգի հնազանդել սմա ճշդիւ առանց ակնառութեան :

Արարեալ 'ի Բուիտենզորխ 'ի 6 Յունուար 1880 :

Ֆոն Լանսբերգ
Հանրական Ատենադպիր
Պանդկաւկ :

(Խմբագիր Բ. 7)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗОУП-Арм.ССР
им. А. Мясникяна

Սահմանադրութիւն և Կարգադրութիւն Ժողովրդեան Հայոց 'ի Ճաւա :

ԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ :

Պայման 1. Է 'ի Ճաւա Ժողովուրդ, որ դաւանի ըզկրօնս Քրիստոնէութեան ըստ կարգաց Հայաստանեայց Եկեղեցւոյ, և կոչի Ժողովուրդ Հայոց 'ի Ճաւա :

ԴԱՍ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ :

Պայմ. 2. Ի դասու Ժողովրդեանն են ամենայն Հայ Քրիստոնեայք՝ որ բնակեալ 'ի Ճաւա, և կամեցին դասակցել նմին :

Պայմ. 3. Են Ժողովրդեանն այլ և այլ գոյք և կալուածք յիշատակելիք 'ի ստորև, զորոց զմուտս պարտէ վարել որպէս նշանակեալ 'ի սմին սահմանադրութեան :

ՀԱՆՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ :

Պայմ. 4. Ամի ամի յամսեան Ապրիլի և յառաջախաղոյն եւս 'ի հարկ լինել ըստ կարգադրութեանս այսմիկ, կամ 'ի դէպ դատել Ատենին յանձանձանաց, և կամ 'ի գրով խնդրել գէթ 5 ումանց 'ի Ժողովրդենէն, որոց գուցէ զօրութիւն ձայնի կամ վարկի, † Ատեանն, որ անուանեսցի 'ի ստորև, կոչեսցէ բոլոր դասակցաց Ժողովրդեանն Ժողով հանրական, որ միշտ գումարեսցի 'ի Բատաւիա :

Պայմ. 5. Ժողովոյս այսորիկ հաղորդ լիցին ամենայն արու Հայք, որոց բնակութիւն իցէ թէ 'ի Բատաւիա, և թէ այլուր 'ի Ճաւա. այսր աղագաւ ազդ արասցէ Ատեանն միով ամսով յառաջ որպէս զօրդ և մարթիցի նմա զօր, զժամ և զտեղի, և 'ի դէպս անսովոր Ժողովոց. զխնդիրս իսկ նոցին :

---

† Վօտ այօրէնտն ժամէ,

Ընթռակալ Ատենին յանձանձանաց վարեսցէ ըզ-
ժողովս։

Ատենադպիր նորա կալցի զյիշատակարան նոցին։

Պայմ. 6. Ընդունելի լիցի 'ի ժողովի վարկ արուաց միայն, որոց լցեալ իցեն ամք քսան և մի, և բնակութիւն կալեալ գոնէ զամս երկուս 'ի Ճաւա կղզւոջ։

Ի պառակտել կարծեաց զիրաւանց վարկի ուրուք 'ի ժողովի, առաւելութիւն վարկից, որոց յայտնի իցեն իրաւունք, հատցէ վճիռ։

Պայմ. 7. Որոց ըստ վերագոյն պայմանին անզօր իցեն ձայնք, է նոցա խորհրդական և ոչ վարկ։

Այլ յառաջարկել ուրուք և կամ ոմանց 'ի զօրաւոր ձայնաւորաց, մարթի ժողովոյն աւելեօք ձայնից մատուցանել ումեք կամ ոմանց յանձայնից անտի զիրաւունս զօրութեան ձայնի։

Պայմ. 8. Ի չկարել որոց այլուր բնականան 'ի Ճաւա, իւրովի գալ 'ի ժողով հանրական, մարթի կարգել նոցա երեսփոխանս 'ի զօրաւոր ձայնաւորաց, որոց լիցին իրաւունք տալոյ զվարկս և 'ի դիմաց նոցին։

Այլ մի լիցի ումեք մատուցանել զվարկս առաւել քան զՀինգ համայն ընդ անձին և ընդ այլոց։

Պայմ. 9. Ամենայն խնդիրք վճարեսցին աւելեօք ձայնից։

Այլ աւելեաց պէտք են երից չորիր մասին ներկայ վարկից 'ի փոփոխութիւնս առնել 'ի սահմանադրութեանս, 'ի վաճառել և 'ի գնել զանշարժուն իրս, և կամ 'ի շրջել զպէտս մտից նոցա և 'ի ծախել այլազգ՝ քան է յիշատակեալ և սահմանեալ 'ի ստորև։

Ի զուգաթիւ դիպել երկուստեք ձայնից, լիցի Նախագահին երկրորդ իմն ձայն վճռական։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ

Պայմ. 10. Վարչութիւն ժողովրդեանն յանձն լինի

Հպկից ոմանց 'ի դասու Հայոց, և անուանի Հանրական Ատեան Յանձանձանաց ժողովրդեան Հայոց 'ի Ճաւա։

Պաշտօնեայք Ատենին ընտրին յերիր ամի 'ի տարեւոր Հանրական ժողովի կատարեալ աւելեօք ձայնից, այսինքն է աւելի քան կիսով թուոյ ներկայ վարկից։

Ի չգտանել ուրուք իսկոյն զայս կատարեալ առաւելութիւն ձայնից, վերստին արկցին ձայնք զերկոցունց՝ որ զառաւելագոյն կալան ձայնս, և 'ի դէպս այսպիսիս պարտ է երկոցուն նոցա, զորոց ձայն արկանի, չտալ զվարկ իւրեանց։

Յետ երից ամաց հրաժեշտ առնուն, այլ նոյն հետայն մարթի ընտրել նոցա անդրէն։

Յորոց 'ի Բատաւիա միայն բնակին, լիցին պաշտօնեայք Ատենին Յանձանձանաց։

Պայմ. 11. Ի հրաժարել ուրուք 'ի պաշտօնէից Ատենին չև ամացն երից բոլորեալ, կամ 'ի վճարիլ 'ի կենաց և կամ 'ի մեկնել այլուր, հարկ է այլոց 'ի նոցանէ գումարել 'ի միում ամսոջ ժողով հանրական առ 'ի ընուլ զտեղին։

Պայմ. 12. Ընդ առնուլ Ատենին զկոչումն, ընտրեսցէ իսկ և իսկ 'ի միջոյ իւր Նախագահ, Ատենադպիր և Գանձակալ։

Պայմ. 13. Յաջորդ անուանքս առցեն 'ի սկսուածի զդէմս պաշտօնէից Ատենին։

Յովհան Յարութիւն իբր Նախագահ
Ա. Պ. Ա զանուր իբր Ատենադպիր
Գ. Ե. Գասպար իբր Գանձակալ
Ծ. Ա. Թովմաս և Յովհաննէս Շ. Սարգիս։

Պայմ. 14. Ատեանն բաժանէ զպաշտամունս 'ի պաշտօնեայս իւր, և ինքնին կարգ դնէ զբաղանաց իւրոց։

Գումարի երբ և կարեւոր թուեսցի Ատենակալին, և կամ թէ խնդրեսցէ ոք 'ի պաշտօնէից զայն։

Ի գումարութիւն ժողովոյ Ատենի խնդրի ներկայութիւն գոնէ երից 'ի պաշտօնէից նորա։

Յամենայն խնդիրք վճարեսցին աւելեօք ձայնից։

Ի հաւասար բաժանել ձայնից, լիցի Ալթոռականին երկրորդ վարկ 'ի վճիռ։

Պայմ. 15. Ատեանն բերէ զդէմն ժողովրդեանն առաջի օրինաց և այլուր, առնէ վասն նորա զկարևորս ամենայն օրէնք, յանձանէ զամենայն կալուածս և զգոյս նորա, և զաւանդս, որ ընդ խնամով նորա իցեն. ստանայ զմուտս նոցա և տայ զձեռագիր ստացից, և ոչ անցանելով զյաջորդ սահմանօք, զօրէ շրջել յանուն ժողովրդեանն զանշարժուն իրս, և յայլս հանել զկացեալս ընդ անուամբ և կամ ընդ ձեռամբ ժողովրդեան, փոխ տալ այլոց արծաթ ընդ գրաւականաւ, և կամ ընդ պատշաճաւոր երաշխեօք. կազմել զկարևոր մուրհակս նոցին, զեկուցանել որոց տուեալ է արծաթ 'ի վաշխի, և յետս խնդրել զայն, լուծանել զգրաւս, հանել հրապարակաւ զկալուածս 'ի վաճառ ըստ իրաւանց օրինաց, կամ ըստ զօրութեան անդարձ գրոյ փոխանորդրութեան, գնել և վաճառել 'ի դէմն ժողովրդեանն զթղթեան յարգուն (Շէր), և յաղագս այսր ամենայնի տալ և առնուլ զամենայն մուրհակս։

Այլ 'ի գնել և 'ի վաճառել զանշարժուն իրս, և յարձանագրել զնոսին, չիք Ատենին իշխանութիւն՝ եթէ ոչ տացի նմա ն յատուկ 'ի հանրական ժողովոյ աւելեօք ձայնից ըստ 9 պայմանին։

Իսականութիւն է Ատենին կարգել զոք և կամ զերկուս ոմանս 'ի պաշտօնէից իւրոց յարձանագրել 'ի գիւանի զգին, զվաճառ և զգրաւ կալուածոց, զլուծումն գրաւաց, զարձակութիւն երաշխեաց և մուրհակաց, և որ 'ի կարգին։

Այս պաշտօնէից պարտ է 'ի ցոյց իշխանութեան իւրեանց ածել զքաղուածոյս յիշատակարանի ժողովոյ Ատենին։

Պայմ. 16. Տացէ Ատեանն յամենայն ամսեայ ժողովս իւր հանել զմատեանս և զհաշիւս ամսոյն կնացելոյ, և զուզակշռեսցէ զնոսին ընդ առձեռն դրամոց զանձուն։

Կալցի զյիշատակարան ժողովոց իւրոց և զպատճէն նամականւոյն։

Պայմ. 17. Ատենին յանձն է յարդիւնս ածել զվճիռս հանրական ժողովոց, զօրէ նա դնել կարգս ներքինս, և ընդունի զմուտս այլ և այլ կալուածոց և ընչից ժողովրդեանն, այլ պարտ է նմա պատկանել կամ գործ դնել զմուտս զայն միայն 'ի պէտս՝ որ նշանակին ուրոյն ուրոյն 'ի ստորև։

Եթէ ոչ ստիպեալ յանակնկալ դիպաց, որ հարկիցեն զառ ժամայն ծախս ոչ 'ի վերբ քան զվեց հարիւր գիւղերաց ըստ ամի, մի լիցի Ատենին յայլ պէտս ծախել զմուտս ժողովրդեանն մինչև զայն սահմանեալ հանրական ժողովոյ։

Ոգ լիցի Ատենին բնաւ իսկ մի յաւելուլ ելից քան զմուտս գոյից։

Պայմ. 18. Ի հանրական ժողովի գումարելոյ ըստ սովորութեան ամի ամի յամենայն Ապրիլի, յայտնեսցէ Ատեանն զանցս տարւոյն անցելոյ, և առաջի արարեալ զմատեանս, զհաշիւս, զցոյցս, զմուրհակս կալուածոց, զգիրս պարտուց, զթղթեան յարգուն և զկշիռս գանձուն, տացէ համար զյանձանձանց իւրոց։

Հաշիւքն սարօք նոցին գիցին յառաջագոյն գէթ զեօթնեակ մի յընթերցութիւն և 'ի քննութիւն ժողովրդեանն 'ի ժամատան, ուր գումարեսցին սովորաբար ժողովքն հանրականք։

Ընդ Հասարակութեան ժողովրդեան և գոյ 'է խնամ նոցին։

ԵԿԵՂԵՑԻ։

Պայմ. 19. Ժողովրդեանն է եկեղեցի կառուցեալ 'ի Բատաւիա յանուն սրբոյն Յովհաննու, և նուիրեալ 'ի պաշտօն քրիստոնէական կրօնից։ Շինուած եկեղեցւոյն ապահարկեցաւ 'ի Պետութենէն հրովարտակաւ, որ յամի 1853 'ի 3 Օգոստոսի, և անկանի 'ի խորան Մ, 'ի մասն Գ, 'ի թիւ 409, 'ի գետնահարկ թիւ 8926, և արձանագրեալ 'ի մուրհակ սեփհականութեան, որ յամի 1853 'ի 18 Հոկտեմբերի 'ի թիւ 574։

15

Դրախք 'ի պահ շինուածոյ եկեղեցւոյս 'ի պաշտօն կրօնից Հայոց և 'ի ռոճիկ քահանայի հոգացեալ 'ի մտից գոյիցն, որք են:

1. Կալուած կանգնեալ յԱրքայադաշտ անուն հրապարակի 'ի Բաթաւիա, 'ի Դաս Մ. 'ի Մաս 3. 'ի Հատուած Գ. 'ի Թիւ 109, 'ի Գետնահարկ 5616: Կալուածս այս գրեցաւ յանուն եկեղեցւոյ սրբոյն Յովհաննու ըստ մուրհակի սեփհականութեան յամի 1861 'ի 27 Մայիսի 'ի Թիւ 454:

2. Ամենայն շարժուն իր, Թղթեան պարտուց, փոխք ընդ երաշխեօք և գրաւականք ըստ մատենից և արձանագրաց եկեղեցւոյն որոշեալք 'ի նոյն պէտս:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ:

Պայմ. 20. Ժողովուրդն 'ի պահ գիտութեան հայրենի լեզուին 'ի միջի մանկտւոյն Հայոց յայսմ կղզւոջ, և 'ի սնուցանել և 'ի դաստիարակել զմանկտին զայն 'ի պէտանի յօդուածս ընկերութեան, եդ 'ի Բաթաւիա Դպրոց անուն Մանուկ և Յարութիւնեան Ուսումնարան, ընդունելի լեալ Պետութեանն հրովարտակաւ, որ յամի 1855, 'ի 22 դեկտեմբերի 'ի Թիւ 23:

Ի լրումն ծախուց այսր Ուսումնարանի և վարձուց վարժապետաց նորա, ևկամ թէ առ 'ի չգոյէ բաւական թըւոյ աշակերտաց յերթալ և 'ի կրթել յուսումնարանին, Ատեանն արժան համարեցի հաւանութեամբ ժողովրդեանն հայթայթել մանկտւոյն Հայոց յայսմ երկրի զառանձին կըրթութիւն հայրենի լեզուին, վարեցլին մուտք անշարժուն իրաց և հասից գրելոց յանուն Ուսումնարանին, որք են Մթերանոցք երկու, որ կան 'ի Կալերսար հրապարակի 'ի Բաթաւիա 'ի Դաս Գ. յԱրևմտեան մասին, 'ի Թիւ 39 և 40 ըստ մուրհակաց գնոց, որ յամի 1861 'ի 3 Յունիսի 'ի Թիւ 464 և 466, 'ի գետնահարկ 4832 և 8394:

Տուն մի կանգնեալ 'ի Տանաբանգ Թաղի 'ի Բաթաւիա, 'ի Դաս Մ. 'ի Մաս 3. 'ի Հատուած Գ. 'ի Թիւ 82 ըստ մուր-

հակի գնոց, որ յամի 1856 'ի 8 դեկտեմբերի, 'ի Թիւ 677 'ի գետնահարկ 7753:

Տուն մի կանգնեալ 'ի Սկօտ փողոցի 'ի Բաթաւիա 'ի Դաս Մ. 'ի Հատուած Գ. 'ի Թիւ 91 ըստ մուրհակի գնոյ, որ յամի 1877 'ի 12 Նոյեմբերի, 'ի Թիւ 1040 'ի գետնահարկ 8333:

Նոյն ամենայն շարժուն իր, Թղթեան պարտուց, փոխք ընդ երաշխեօք, և գրաւականք որոշեալք ըստ գրոց և արձանագրաց 'ի նոյն պէտս:

Պայմ. 21. Պարտ է զխէթ միում 'ի վարժապետաց Ուսումնարանին լինել ազգաւ հայ և բաւական յուսուցանել մանկտւոյն զլեզուն հայեցի:

Պայմ. 22. Եթէ մուտք շարժուն և անշարժուն իրաց ըստ 20 պայմանին պատկանեալք 'ի դարման և 'ի պահ Ուսումնարանին, և կամ 'ի մատակարարութիւն առանին ուսման յաւելուցուն քան զեղս 'ի պէտս նորին, 'ի կիր արկցի յաւելուածն հաւանութեամբ ժողովրդեանն 'ի կառոյցս հանգունաւոր դպրոցաց Հայոց և յայլ տեղիս, և կամ 'ի տալ չքաւոր մանկտւոյն Հայոց վայելել 'ի վարժս այլուր:

ՀԱՅԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Պայմ. 23. Ի նպաստ չքաւոր այրեաց և որբոց Հայոց, և 'ի դաստիարակութիւն անինչ մանկտւոյն արար ժողովուրդըն կամաւոր հանգանակաւ զգոյս ընդ անուամբ Հայկեան Միաբանութիւն:

Սոյին ողորմածութեան խորհրդով ժողովեալ արծաթն եդեալ է 'ի վերայ Մթերանոցի կանգնելոյ 'ի Կալերսար 'ի Բաթաւիա, 'ի Դաս Տ. յԱրևելեան մասին, 'ի Թիւ 34, և կացելոյ այժմ յանուն եկեղեցւոյ սրբոյն Յովհաննու ըստ մուրհակի գնոց, որ յամի 1863 'ի 7 Սեպտեմբերի 'ի Թիւ 685 'ի գետնահարկ 8967: Եդեալ է դարձեալ արծաթն 'ի շարժուն իր, 'ի փոխս ընդ երաշխեօք, և 'ի Թղթեան պարտուց և գրաւուց, որպէս երևեցի 'ի մատենից Միաբանութեանն:

Մի լեցի Ատենին այլազգ 'ի կիր արկանել զմուտս այսր գոյից, քան զոր ասացաւն վերագոյն ըստ բուն և ներքին կարգադրութեան նոյն Միաբանութեանն։

Պայմ. 24. Բաց 'ի կալուածոցն, զորոց բանք եղեն վերագոյնս, արձանագրեալ են դարձեալ յանուն եկեղեցւոյ սրբոյն Յովհաննու՝ յետագայքս։

Ա. Մթերանոց կանգնեալ 'ի Կալիբսար 'ի Բատաւիա 'ի Դաս Թ. յԱրևելեան մասին, 'ի Թիւ 12. ըստ մուրհակի գնոց, որ յամի 1857 'ի 26 Հոկտեմբերի 'ի Թիւ 813 'ի գետնահարկ 5323։ Այս Մթերանոց է Ամենափրկչեան անուն վանացն Ջուղայ յիսպահան 'ի Պարսս, ըստ մուրհակին գրելոյ 'ի Բատաւիա յամի 1859 'ի 13 Հոկտեմբերի 'ի Թիւ 75. առաջի Մինսէն անուն նօտարի հասարակաց, ուստի մուտք նորա սրբեալ 'ի ծախուց, լեցին 'ի կամս նոյն վանաց։

Բ. Մուրհակ արձանագրեալ յատենի իրաւանց յառաջին գրաւական տան կանգնելոյ յԱրքայադաշտ հրապարակին 'ի Բատաւիա 'ի Դաս Մ, 'ի Հատուած 4, 'ի Թիւ 149, ըստ գրոյ գրաւուն, որ յամի 1871 'ի 18 Մարտի 'ի Թիւ 20։

Գ. Այլ ևս գրականք և գլուխք դրամոց յանձնեալք 'ի վարչութիւն եկեղեցւոյ սրբոյն Յովհաննու, և յանուն նորա գրեալք, որք ըստ մատենից և արձանագրաց նորին այլոց են, որոց և տացի համար ընդ մտից նոցին, որք են։

Մուրհակք առաջին գրականաց արձանագրեալք յատենի իրաւանց 'ի վերայ անշարժուն իրաց, որք են։

Կալուած կանգնեալ 'ի Բոջնգ հրապարակի 'ի Սմարանգ 'ի Թիւ 901, ըստ մուրհակի սեփականութեան 'ի Թիւ 401, ըստ գրոյ գրաւու, որ յամի 1877 'ի 27 Նոյեմբերի։

Երկու վիճակք գետնոյ եղեգնեայ շինուածովք, որ 'ի Նոսա, 'ի Քամպոն Բլիտանգ 'ի Բոյտնչորխ 'ի Գետնահարկ 71 և 318։

Այլ և այլ աւանդս յայսոսիկ յանձնեալս 'ի խնամս Եկեղեցւոյն՝ է գոյք ինչ կացեալ յանուն Գանձանակի Տընանկաց Ջուղայ, և յապահովեալ այժմ, որպէս երևեսցի յայտնեալ 'ի մատեանս և 'ի յիշատակարանս Եկեղեցւոյն։ Մուտք այսր գոյից ծախեսցին յօգնութիւն կամ 'ի նպաստ չքաւոր Հայոց Ջուղայ քաղաքի մերձ յիսպահան ի Պարսս, 'ի ձեռն խնամակալաց կամ վարչաց Գանձանակի Տնանկաց կարգելոց անդանօր։

Պայմ. 25. Եւ զի առ կազմութեան այժմու ժողովրդեան՝ եկեղեցի սրբոյն Յովհաննու, Մանուկ և Յարութիւնեան Ուսումնարան և այլ գոյք գումարեալք վերագոյն՝ համարին յայսմ հետէ յօգուածք և եթ նորա, և կան ամենեքին ընդ յանձնանձանօք ժողովրդեանն, և չիք ևս նոցա վարչութիւն ուրոյն, յանձն է Ատենին հոգալ փոփոխել և ուղղել զարձանագիրս անշարժուն իրաց, պարտուց և գրաւուց կացելոց այժմ որիշ որիշ յանուն կամ յանուանս գոյիցն այնոցիկ, 'ի հասարակաց դիւանի արձանագրուած կալուածոց և գրականաց, որպէս զի փոխանակեսցին մուրհակք անցնիւր որ ոչ ևս են ըստ պատշաճի, ընդ կազմելոցն յանուն ժողովրդեանն ըստ օրինի։

Պայմ. 26. Ի փոխանակել վաճառիւ կամ այլազգ զվերագոյն յիշատակեալ անշարժուն իրս և զփոխս ընդ երաշխաւոք այլոց անշարժուն իրաց և փոխոց, մուտք փոխանակացն լեցին և վարեսցին միշտ 'ի պէտս նոյն նպատակի կալուածոցն, զոր փոխանակեցին։

ԱՆԿՈՒՄՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ։

Պայմ. 27. Ի չմնալ 'ի ժամանակի իմիք աւելի քան զերկու գլուխս ազգատոհմից 'ի ժողովրդենէ աստի, լուծցի սա ըստ օրինաց, և ամենայն կալուածք, գրականք, գոյք և շարժուն իրք յիշատակեալք 'ի վերագոյն՝ անցցեն 'ի ժողովուրդ Հայոց 'ի կացեալն ընդ Թեմով Եաթուղիկոսին կամ Հայրապետի եկեղեցւոյն Հայոց, որ նստի

այժմ 'ի վանս Էջմիածնի յԵրևան 'ի Ռուսականն Հայաստան։

Պարտ լիցի յայնժամ Հայրապետին զամենայն շարժուն և անշարժուն ինչս ժողովրդեանս Հայոց 'ի Ճաւա ընդունել տալ առ ձեռն Է յանձնաժողովոյ աւանդապահաց ընկալչելոց 'ի Բատաւիա, և կարգելոց հաւանութեամբ Ատենի խորհրդականաց իւրոց, այն է Սինհոդոսին։ Պարտ է յայնժամ Հայրապետին ընդունել և դարմանել զԴպրոցս 'ի զուտ մտիցն կիսոյ, զորոյ զերիս չորիս մասունս վարեսցէ նա 'ի պէտս ուսմանց քրիստոնեայ մանկանց 'ի Հայաստան, և ըզմիւս չորիր մասն յօգուտ ուսմանց մանկանց Հայոց 'ի Ջուղա մերձ յԻսպահան 'ի Պարս։

Միւս կէս մտիցն պահեսցի և յաւելցի 'ի գլուխ անդր։

Եթէ յարիցէ դարձեալ զայնու ժամանակաւ ժողովուրդ Հայոց 'ի Ճաւա, անկ լիցի նմա ստանալ զպահեալ կէս մտիցն, և վարել նովաւ ճշգիւ որպէս նշանակեալ է 'ի սահմանադրութեան աստ։

Յոչ յառնել այլոյ ժողովրդեան Հայոց զասս տասն 'ի Ճաւա, ըստ վերյիշելում իշխանութիւն լիցի կաթուղիկոսին համաձայն ընդ Ատենի խորհրդականաց իւրոց թողուլ զգլուխ դրամոցն աստ ընդ յանձնաժողովոյ, և կամ զամենայն կալուածս վաճառել, և ժողովել զամենայն հասս արտաքինս ընդ սովին պարտականութեամբ, զի զամենայն արծաթն դիցէ նա վերստին ընդ շահեկան ապահովութեամբ, և մտից նորին կարգեսցէ և դարմանեսցէ զվարժարանս Հայոց, զերիս չորիս մասունս մտիցն ծախեալ յօգուտ քրիստոնեայ մանկանց 'ի Հայաստան, և զմիւս չորիր մասն 'ի պէտս մանկանց Հայոց 'ի Ջուղա մերձ յԻսպահան 'ի Պարս։

Պատճէն այսր սահմանադրութեան յղեսցի Նորին Սրբութեան և Ատենի խորհրդականաց Նորին, որպէս զի ականարկութեամբ Նախակարգ հատուածոյն կացցէ մնասցէ առ նմա միշտ։

ԿԱՏԱՐԱԾ

Ատենին յանձնէ խնդրել յամենիշխան Կառավարչէ Հնդկաց Հոլանդացւոց զհաւանութիւն այսր սահմանադրութեան և զօգաւորութիւն ժողովրդեան Հայոց 'ի Ճաւա։

12 Յունուար 1881։

Թարգմանեաց

Խաչիկ Աբրահամ Թումեան

Ուղիղ թարգմանութիւն 'ի հոլանդերէն բնագրէն

(Ձեռ") Ա. Գ. Աղաբեկեան

Երդմնեալ Թարգմանիչ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

2013

13411

«Ազգային գրադարան»
NL0046290